Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/3254-15
17.02.15

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՁԻ-2/3.10

Ձեր 13.02.2015թ. թիվ 15/15.1/2006-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հուն-Սավ» ՍՊԸ հետ գործարքը կնքված է 01.02.2015թ.-ին, իսկ վերոնշյալ որոշմամբ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2013-2014 թվականներին, ուստի նշված գործարքի որակումը որպես վերոնշյալ ծրագրի իրականացման հետ անմիջականորեն կապված և զգալի նշանակություն ունեցող գործարք, համարում եմ չհիմնավորված:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800309

034/4628-15



17 փետրվարի, 2015թ.

ք. Գյումրի

N Ե 25/15

Խ-2/3.10

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պրն Ս. Տեր-Սիմոնյանին»


Մեծարգո պարոն Տեր-Սիմոնյան,

Խնդրում ենք «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրի գործողության ժամկետը երկարացնել՝ 8-րդ և 9-րդ կետերում «2014 թվական» բառերը փոխարինել «2015 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

Կից ներկայացնում ենք համապատասխան որոշման պատճենը:

Խորին շնորհակալությամբ և լավագույն ցանկություններով

Ջաննեթթ (Քույր Արուսյակ) Մանուկյան
Մեծավորուհի



315

099-4605
27 02 15

Խ-2/3.10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մայիսի 2013 թվականի N Մ- 359 -Ա

քաղ. Երևան

«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ԱՆԻ ԲԵՁԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱ-
ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-1/5976-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N 02/2580-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մայիսի 7-ի N ՖԲ/ԱՆՄ-5/3270-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 4-ի N ՎՄ/3-4/5139-13 ու Երևանի քաղաքապետի 2013 թվականի մայիսի 15-ի N 02/16-26437 հեղափոխությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 285000000 դրամ արժեքով «Անի Բեզիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.
- «Թեքնո Բազա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862438) 2013 թվականի ապրիլի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Թբիլիսյան խճուղի 19 հասցեում գտնվող տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 83296805 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

ՔՆ-Հ/Յ.10

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մեծավորուհի Ջաննեթթ (քույր Արուսյակ)
Մաջոնյանի կողմից

«29» ապրիլի 2013թ


6/11

«ԱՆԻ ԲԵՉԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԾՐԱԳԻՐ

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՔՆ-Հ/3.10

1	Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի սաներից առնվազն 3-4 հոգի ընդունվում են Երևանի տարբեր ԲՈՒՀ-եր: Սովորելու ընթացքում սաներն ունենում են դժվարություններ Երևանում ապրելու հարցում: Մինչ այսօր նրանք ապրում են տարբեր բարեխրատի տներում և այդ պատճառով սեմեստրի ընթացքում նրանք հաճախ տեղափոխվում են տնից-տուն: Բացի դրանից ոչ միշտ են կացարանի պայմանները նպաստում սովորելուն: Ծրագրով նախատեսվում է ՏՀԿ սաների, ինչպես նաև՝ այլ մարզերից եկած անապահով ընտանիքների լավ սովորող առաջին 20, իսկ հետագայում, լրացուցիչ նոր մասնաշենքը կառուցելուց հետո՝ մինչև 30 ուսանողների համար ստեղծել մի կենտրոն, ուր ուսանողները կապրեն ուսումնառության ընթացքում: Այնտեղ կստեղծվեն բոլոր կոմունալ-կենցաղային պայմանները, որպեսզի ուսանողները իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ուսման վրա:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է իտալահայ բարերար Ալեքո Բեզիկյանը:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀԲ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը (հասցե՝ Գլուսի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ 05513266):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաք Թբիլիսյան 19 տուն հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին:
6	Ծրագրի բյուջեն	<ul style="list-style-type: none"> • արդեն գնված տան վերանորոգում-100 միլիոն դրամ • կահավորում- 20 միլիոն դրամ • նոր մասնաշենքի կառուցում-150 միլիոն դրամ • նոր մասնաշենքի կահավորում-10 միլիոն դրամ Ընդամենը՝ 285'000'000 դրամ:
	Բարեգործություն ստացողը	Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Օիրակի և Լոռու մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների 17-25 տարեկան մոտ 30 երիտասարդներ:
	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է, այժմ դրակավորման է ներդրվել 2013-2014 թվականներին իրականացվելիք ծրագիրը:



6/11

9	<p>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.</p> <ul style="list-style-type: none"> 2013թ. ապրիլ-օգոստոս ամիսներին՝ կենտրոնի վերանորոգում մոտ 100 միլիոն դրամ 2013 թ. օգոստոս ամիս՝ կահավորում, մոտ 20 միլիոն դրամ 2014թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին՝ նոր մասնաշենքի կառուցում մոտ 150 միլիոն դրամ 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ նոր մասնաշենքի կահավորում՝ մոտ 10 միլիոն դրամ:
10	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.</p> <ul style="list-style-type: none"> վերանորոգում, որի առաջին փուլի համար արդեն կնքվել է շինարարական կապալի պայմանագիր մրցույթի հաղթող «Թեքնո Բազա» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքն է 83 296 805 դրամ վերանորոգում, որի երկրորդ փուլի համար կպահանջվի մոտ 16 միլիոն դրամ անհրաժեշտ կահույքի, կենտրոնի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ կրմուխ-կենցաղային սարքերի ու սարքավորումների գնում: Նախատեսվում է առաջին էտապում գնել մոտ 20 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ: նոր մասնաշենքի կառուցում հարակից տարածքում, որի համար կրկին կհայտարարվի շինարարական կազմակերպության մրցույթ: Շինարարության արժեքը կլինի մոտ 150 միլիոն դրամ: նոր մասնաշենքի կահավորում անհրաժեշտ կահույքով և սարքավորումներով: Նախատեսվում է այս էտապում գնել մոտ 10 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ:
11	<p>Մրակրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p> <p>Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</p>
12	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանների հետ:</p>
13	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p> <p>Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարի կողմից: Այդ նպատակով նա պետք է ներգրավի ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային անդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև ՀՀ սոցիալական և աշխատանքի նախարարության, հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից:</p>

Տ Ե Ղ Ե Կ Ա Ս Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին «Տիրամայր Հայաստանի կրաստան» բարեգործական կազմակերպություն» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտորդյան կամ առաջարկության բովանդակությունը
«ՀՀ ֆինանսների նախարարություն – 17.02.15, N 06/3-3/3254-15»	
Դիտորդյան կազմի և անունի: Կցված է նախագծի լրամշակված տարբերակը	<p>Հաշվի առնելով այս հանգամանքը, որ «Հուն-Սավ» ՍՊԸ-ին հետ գործարքը կնքված է 01.02.2015թ.-ին, իսկ վերոնշյալ որոշմամբ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2013-2014 թվականներին, ուստի նշված գործարքի որակում որպես վերոնշյալ ծրագրի իրականացման հետ անմիջականորեն կապված և զգալի նշանակություն ունեցող գործարք, համարում են հիմնավորյալ:</p>

21-2/3.10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ՆԱԽԱԳԻՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
փետրվարի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

Ձ-2/3.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-069-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԳ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-14 և փետրվարի -ի N 06/3-3/-14 եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երեխաների հովանավորություն» ծրագրի մասին» N Մ-069-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները
 - 1) որոշման 1-ին կետում «40,100,000 դրամ» բառերը փոխարինել «38,151,415 դրամ» բառերով:
 - 2) որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «41,100,000 դրամ» բառերը փոխարինել «38,151,415 դրամ» բառերով:
 - 3) որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «6,100,000 դրամ» բառերը փոխարինել «3,151,415 դրամ» բառերով:
2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման առաջին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01000825) 2015 թվականի հունվարի 30-ին կնքված N WVA/SOD/PR-15/001/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում, 3,151,415 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Է՞ն. 060 544303

06-3-3/32 59-15
17.02.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ձ-2/3.11


Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.02.2015թ. թիվ 15/15.1/2016-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-069-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միմոնյան


022/4653-15



2

6.	Ծրագրի բյուջեն	<p>Բնագավառը՝ սոցիալական 26,556,000.00 (քսանվեց միլիոն հինգ հարյուր հիսուսվեց հազար) ՀՀ դրամ</p>
7.	Բարեգործություն ստացողը	<p>Ցանկացած անտոդոնմամբ վեցից երեսունհինգ տարեկան հաս կարիքներով երեխաներ և երիտասարդներ</p>
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	<p>10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ)</p>
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինություն 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումները ապահովում:</p> <p>1. Ներքին հարդարման աշխատանքներ. պահանջվող գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր:</p> <p>2. Կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր:</p> <p>3. Կրիեստանոցները սարքավորումներով և նյութերով ապահովման համար անհրաժեշտ գումարն է 4,798,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր ինսուսուսուք հազար) ՀՀ դրամ:</p> <p>4. Էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) դրամ:</p> <p>5. «Արմենթեյ» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախ և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,</p> <p>6. Չափաֆիկացում, սպասարկում 1,350,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ</p> <p>7. ՄՈՍ Միջբնա Մի՞՞րԸ անվանագրության համակարգի տեղակայում՝ 908,000 (ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:</p> <p>8. Միմիլիոնի ձեռք բերում 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)</p> <p>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:</p> <p>(Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային</p>

27/3/12



3

		<p>արտոնություններից)</p> <p>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից: (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից: (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>6. Փայտանշակման արհեստանոցի կահույք, կահույքի հուսք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ, որից 500,000 (հինգ հարյուր հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից: (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):</p> <p>7. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից: (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>8. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր և գործիքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>9. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար վրձին ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 848,000.00 (ութ հարյուր քառասունուութ հազար) դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>10. Փայտանշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000.00 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ, որը ներմուծվելու է: (Ավելալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)</p> <p>11. Էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) դրամ</p>
--	--	---

2/3/12

4

	<p>12. «Արմենթեյ» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ տարեկան 57,600.00 (Հիսունյոթ հազար վեց հարյուր) էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և տարեկան կտրվածքով 62,400.00 (Վաթսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:</p> <p>13. Գազաֆիկացում, սպասարկում 1,350,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ գազի կախսա - 600,000 (վեց հարյուր հազար), գազաֆիկացում - 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ, գազի սպասարկման վճար տարեկան - 40,000 (քառասուն հազար) դրամ</p> <p>14. Անվտանգության համակարգ՝ տարեկան սպասարկումով 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ՝ որից տեղադրում՝ 368,000 (երեք հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ և տարեկան սպասարկում 54,000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ:</p> <p>15. Միմիբրուփ ներմուծում 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: (Ավելարկում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):</p>
11. Ծրագրի հրավանագման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Առմիմիստորադատչիայի սենյակի համար կահույք և տեխնիկական արքայվորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (Ավելարկում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնաժողով
13. Ծրագրի արդյունավետության մեխանիզմների մկարագրությունը	«Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնաժողով:

20-2/3.12



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն,
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/3261-15
17-02-2015
20-2/3.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.02.2015թ. թիվ 15/15.8/2001-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն») որոշման նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում լրացուցիչ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միմոնյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

039/4657-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— փետրվարի 2015 թվականի N Մ- քաղ. Երևան

-Ա

20-2/4.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-15 և փետրվարի -ի N 06/-1/15 եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշման մեջ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշման 1-ին կետում «3,632,200,000 դրամ» բառերը փոխարինել «4,132,200,000 դրամ» բառերով:

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է նույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N MT/050215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա բազրիքների և հայելիների պատրաստման ու տեղադրման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 28,829,480 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության պաշտոնակատար Օհանեսյանի կողմից 2015թ.

«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատերի կառուցում» ծրագիր


1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Արամյան 2/2 հասցեում 1307: քմ. հողատարածքում կառուցել սիյուռքի համառոտակալված խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկակա Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատերի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյ ավտոկայանատեղի: ՀՀ կառավարության համար:
2.	Ծրագրի բարեխղճական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, ստրիքերի և պարտավոր վճարմանը զեմ արտոնություններից:
3.	Բաղեւորում	Մնաստ սիյուռքահայ քաղաքամբ պարտ Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 0763 ՍՄՆ) և պարտն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ՍՄՆ):
4.	Ծրագրի կատարումը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Արամյան փողոց 2/2: քաղաքաշինության բնագավառը:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 4,132,200,000 դրամ:
7.	Բարեխղճություն ստացումը	ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք, - ՀԲԸՄ Վիլյամս Հայկական համակարգում իր ծրագրավորման և յուսավորման բաժնիներով, - նրխատարալված ծրագրերը, - «Բացահայտելի Հայաստան» անցյալիստաս սիյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամուր պշխատանքի ծրագիրը, - «Ներքինի» սիյուռքահայ անճախում բանախում կազմակերպման ծրագիրը ՀՀ Լուսն մարզում, - սիյուռքահայ երեխաների համար նախատեսված մեղքա անտային պրակտիկայի ծրագրերը, - Հայաստանում սկստակալ շարժման ծրագիրը, - «Ուսուցում արտասահմանում» հայագրի ուսանողների համար ծրագիրը, - ՀԲԸՄ հարյուրամյա պատմությունը և գործունեությունը նվիրված բանկարան -արկիվը, - ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գլխավորաղբ: - ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի):

20-2/4.1

8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրից նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2015 թվականի նոյեմբեր ամսին:												
9. Սպասարկողների նկարագրությունը և ժամկետները, անմրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով. ա) Ընթրի ճարտարապետական նախագծերի (Լսրիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հերթմուտեային վերանախարդում (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ: բ) տարածքում գտնվող ենթակառուցվածքի (կոմունիկացիան գամբերի, ենթակառուցվածքի և այլն) տեղադրվածքում աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ: գ) Էլեկտրականային շենքի կառուցման աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ: ե) Ընթրի ընթանալու շինարարական աշխատանքները ներառյալ շենքի արտաքին տեսքի վերականգնում, ֆերմանկյունիչ արտաքին տեսքի պատերի կառուցում, շենքի կառավարչական էլեկտրակայան համակարգ, մերթից հարթարան աշխատանքներ, կահավորումը և այլն, որոնք նախատեսվում է ավարտել հասցնել 2015 թվականի նոյեմբերին - 3,773,469,594 դրամ:												
10. Չորս բեղվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրող, ծախսերի և նախատեսվող գինը	<table border="1"> <tr> <td data-bbox="470 196 1064 337">«Նարիկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՄՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀԸՄ Երևանյան կենտրոնատեղիի Լսրիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում:</td> <td data-bbox="470 26 1064 196">52,200,000 դրամ</td> </tr> <tr> <td data-bbox="470 337 1064 462">Կոմունիկացիան գամբերի մաշվածների տեղադրված ենթակառուցվածքի (կոմունիկացիան գամբերի, ենթակայանների, գազի, մետաղալիստեղնի ցամփերի մարդիաների և այլն) տեղադրված աշխատանքների իրականացում:</td> <td data-bbox="470 26 1064 337">65,524,826 դրամ</td> </tr> <tr> <td data-bbox="470 462 1064 525">Էլեկտրականային շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՄՊԸ-ի հետ:</td> <td data-bbox="470 26 1064 462">28,605,920 դրամ</td> </tr> <tr> <td data-bbox="470 525 1064 666">Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար:</td> <td data-bbox="470 26 1064 525">252,399,660 դրամ</td> </tr> <tr> <td data-bbox="470 666 1064 987">Ընթրի ընթանալու շինարարական աշխատանքներ՝ 1,256,129,594 դրամ, Տեղագծում, օդափոխության, օդորակման համակարգերի արքարարումների ու սարքերի, ամրանումների և տնայարարների, հակավերացման ռեսինե ծածկերի ու պոլիմերային ծալապինների, վերնակնների, պլյումինգի պաշտպանների, ապակեների, ջրանմուտիչ մուտքերի, արևային փառանակների, պատի և հատակի կերամիկական սալիկների, մետաղական ճարտարակների, կառավարչական ամրակայան մասերի, արևնետակած գորգերի, պատի մետաղական ցամփի և ծաղկանոցների, կառավարչական սարքի ներմուծում՝ 727,340,000 դրամ:</td> <td data-bbox="470 26 1064 666">1,983,469,594 դրամ <i>44 2/4</i></td> </tr> <tr> <td data-bbox="470 987 1064 1489"></td> <td data-bbox="470 26 1064 987">Ընթրի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնուտազմման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը: 130,000,000 դրամ</td> </tr> </table>	«Նարիկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՄՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀԸՄ Երևանյան կենտրոնատեղիի Լսրիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում:	52,200,000 դրամ	Կոմունիկացիան գամբերի մաշվածների տեղադրված ենթակառուցվածքի (կոմունիկացիան գամբերի, ենթակայանների, գազի, մետաղալիստեղնի ցամփերի մարդիաների և այլն) տեղադրված աշխատանքների իրականացում:	65,524,826 դրամ	Էլեկտրականային շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՄՊԸ-ի հետ:	28,605,920 դրամ	Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար:	252,399,660 դրամ	Ընթրի ընթանալու շինարարական աշխատանքներ՝ 1,256,129,594 դրամ, Տեղագծում, օդափոխության, օդորակման համակարգերի արքարարումների ու սարքերի, ամրանումների և տնայարարների, հակավերացման ռեսինե ծածկերի ու պոլիմերային ծալապինների, վերնակնների, պլյումինգի պաշտպանների, ապակեների, ջրանմուտիչ մուտքերի, արևային փառանակների, պատի և հատակի կերամիկական սալիկների, մետաղական ճարտարակների, կառավարչական ամրակայան մասերի, արևնետակած գորգերի, պատի մետաղական ցամփի և ծաղկանոցների, կառավարչական սարքի ներմուծում՝ 727,340,000 դրամ:	1,983,469,594 դրամ <i>44 2/4</i>		Ընթրի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնուտազմման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը: 130,000,000 դրամ
«Նարիկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՄՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀՀԸՄ Երևանյան կենտրոնատեղիի Լսրիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում:	52,200,000 դրամ												
Կոմունիկացիան գամբերի մաշվածների տեղադրված ենթակառուցվածքի (կոմունիկացիան գամբերի, ենթակայանների, գազի, մետաղալիստեղնի ցամփերի մարդիաների և այլն) տեղադրված աշխատանքների իրականացում:	65,524,826 դրամ												
Էլեկտրականային շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՄՊԸ-ի հետ:	28,605,920 դրամ												
Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար:	252,399,660 դրամ												
Ընթրի ընթանալու շինարարական աշխատանքներ՝ 1,256,129,594 դրամ, Տեղագծում, օդափոխության, օդորակման համակարգերի արքարարումների ու սարքերի, ամրանումների և տնայարարների, հակավերացման ռեսինե ծածկերի ու պոլիմերային ծալապինների, վերնակնների, պլյումինգի պաշտպանների, ապակեների, ջրանմուտիչ մուտքերի, արևային փառանակների, պատի և հատակի կերամիկական սալիկների, մետաղական ճարտարակների, կառավարչական ամրակայան մասերի, արևնետակած գորգերի, պատի մետաղական ցամփի և ծաղկանոցների, կառավարչական սարքի ներմուծում՝ 727,340,000 դրամ:	1,983,469,594 դրամ <i>44 2/4</i>												
	Ընթրի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնուտազմման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը: 130,000,000 դրամ												

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քեյր Բիլինգ Սերվիսիզ» ՍՊԸ-ի հետ:</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքների իրականացում՝ 48,200,000 դրամ, - ապրանքների ներմուծում՝ 81,800,000 դրամ: <p>Էլեկտրականային շենքի կառուցման համակարգերի անցկացում՝ 186,480,000 դրամ:</p> <p>Ջրանատակարարման, ջրահեռացման և էլեկտրակառուցության համակարգերի, սարքերի և սարքավորումների ներմուծում՝ 33,520,000 դրամ:</p>
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>Ընթրի ներքին հայրաքանակ աշխատանքներ՝ 775,000,000 ՀՀ դրամ, - ապրանքների ներմուծում՝ 67,000,000 ՀՀ դրամ:</p> <p>Ազգային փառքերների, պատվոլի դրամ, այլուրուրով երեսպատման, մերթից տպակայան պատերի, ապակյա բազրիքների և ասալիմանակալակի պատրաստման աշխատանքներ, որի համար կնքվել է նախատեսվում է կնքել պայմանագրեր «Պլոնի-Ս» ՍՊԸ-ի հետ:</p> <p>Ներքին և արտաքին լուսավորության սարքերի, կախովի առաստաղների և դռների մերկում</p> <p>Դահլիճի, ցուցարարի, հանդիպումների սենյակների և խանութային կահավորանքի մերկում</p> <p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում</p>
13. Ծրագրի արդյունավետության մեխանիզմների նկարագրությունը	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետարան</p> <p>Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի ռազմավարական համեմատություն կորոնից ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p>

44-2/4.1



Կազմեց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ-2/4.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

18.02.2015թ. № 07/30-2/3368-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.02.2015թ. N 15/15.6/1799-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N՝ Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N2 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» հայտնում ենք, որ ծրագրով հանրապետության ներսում գործարքների համար նախատեսված է 2,622,995,000 դրամ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տվյալներով արդեն իսկ փաստացի իրականացվել են 2,616,762,688.70 դրամի գործարքներ: Հետևաբար, ներկայացված նախագծում պայմանագրերով նախատեսված 28,829,480 դրամի չափով գործարքների ավելացման դեպքում կգերազանցի ծրագրով հանրապետության ներսում գործարքների նախատեսված բյուջեն:

Հարգանքով

Արամ Զանցուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-549

034/4756-15
18.02.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ 06/3-3/2749-15
18.02.2015թ.

Մ-2/4.1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.02.2015թ. թիվ 15/15.6/1799-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին №2 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Սիմոնյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/4036-15
18.02.2015թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարություն բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Ս-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 (Հայկական բարեգործական ընդհանուր փուլային «Հայկացուցություն»)» որոշման նախագիծ որոշման նախագիծ որոշման նախագիծ կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>որ ծրագրով հանրապետության ներսում գործարքների համար նախատեսված է 2,622,995,000 դրամ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տվյալներով արդեն իսկ փաստացի իրականացվել են 2,616,762,688.70 դրամի գործարքներ: Հետևաբար, ներկայացված նախագծում պայմանագրերով նախատեսված 28,829,480 դրամի չափով գործարքների ավելացման դեպքում կգերազանցի ծրագրով հանրապետության ներսում գործարքների նախատեսված բյուջեն:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարության հիմնական դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Հաշվի առնելով դիտողությունը կազմակերպությունը ներկայացրել է մասնավորապես ծրագրի որոշման նախագիծը խմբագրվել է:</p>

ՁԻ-2/4.1

AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
 ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒՅԻՆ

ARMENIAN REPRESENTATION
 ԳԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆ
 9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
 Tel.: (374 10) 51-22-50; Fax: (374 10) 51-22-52; Email: agbuarm@agbu.am

փետրվարի 19, 2015թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր զանձապետ՝ պարոն Ատոմ Զանջուրազյանին

ՁԻ-2/4.1

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 18.02.2015թ. թիվ 15/15.6/2289-15 գրության և հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2015թ. թիվ 07/80-2/3368-15 գրությամբ ներկայացված կարծիքը՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 18-ի թիվ Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարք ճանաչելու մասին, հայտնում եմ, որ անհրաժեշտություն է առաջացել ավելացնել ծրագրի բյուջեն 500,000,000 ՀՀ դրամով՝ ելնելով ստորև նշված հանգամանքներից.

1. Ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների գները հաշվարկվել են արտարժույթով (ԱՄՆ դոլար և/կամ ԵՎՐՈ), որոնց փոխարժեքները 2014թ. մայիսի ամսվանից մինչև օրս զգալի տատանվել են, որոնց արդյունքում շինարարական կյուրերի և աշխատանքների գները զգալիորեն բարձրացել են.
 2. Շենքի ներքին և արտաքին հարդարման աշխատանքների ծավալներն ավելացել են, ինչի արդյունքում առաջացել է որոշ ապրանքների լրացուցիչ ձեռքբերման և ներմուծման անհրաժեշտություն:
- Միաժամանակ խնդրում եմ ծրագրի իրականացման տևողությունը երկարաձգել մինչև 2015թ. նոյեմբերի 30-ը ներառյալ:
- Հաշվի առնելով վերոգրյալը՝ կից Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ ծրագրի լրամշակված տարբերակը և խնդրում եմ հաստատել այն:

Կանխահայտ շնորհակալությամբ և հարգանքներով՝

(Signature)
 Օհանես Եղոնեկյան
 ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության
 տնօրենի պաշտոնակատար

327

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

փետրվարի 2015 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա

Ճ-2/4.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1036-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի -ի N 07/80-2/-15 և փետրվարի -ի N 06/-/-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի փետրվարի 4-ի գրությունը, որ ո ղ շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-1036-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «9,748,260 դրամի չափով» բառերը փոխարինել «7,168,718.45 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ճ-2/4.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.02.2015թ. № 07/80-2/3164-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.02.2015թ. N 15/15.6/1797-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1036-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ 06/3-3/2754-15
12.02.2015թ.

ՃԻ-2/4.2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.02.2015թ. թիվ 15/15.6/1797-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1036-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

034/4043-15
12.02.2015թ.